


ԲԱՆԱՍՏԵՂԾԱԿԱՆ

ՏԱՂ ՀԱՄԵՂ՝ ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆ ԿՈՅՍՆ



Ողջո՛յն ընդ քեզ, Մարիամ,
 Մայր Աստուծոյ հաւատամ,
 Սիրով սրբիս յոյժ ըղձամ,
 հոգւովս եռամ եւ տառապամ,
 Ողջո՛յն ընդ քեզ թագուհի,
 մայր է՝ աղախին Քրիստոսի,
 Պարզ եւ մաքուր հայելի,
 բարձող երկանցն եւայի,
 Աստուածածին՝ բուրասան,
 ծաղկեալ պարտէզ եւ շուշան,
 Բողբոջ եւ տունկ պալատան,
 դուստր եւայի աննրման,
 Աստուածածին, դու դրախտ,
 դուստր Դաւթի բարեբախտ,
 Ծընար մարմնով, կոյս անախտ,
 զո՞ք միածինն անբաղդատ,
 Աստուածածին դու կամար
 հրեղէն ծովուն՝ մեզ համար,
 Հոգւովս ի քեզ զինահար,
 բարեխաւսեա՛ւ անդադար:
 Աստուածածին շնորհալից,
 կոյս անարատ եւ անբիծ,
 Աստուածորդւոյն զւիր ծիծ,
 ջընջեա՛ւ զմեղաց մեր ըզզիծ,
 Յորժամ երեկ Գաբրիէլ,
 Քեզ առեցեաց Մանուէլ,
 Ուրախացաւ իւրայէլ,
 Աստուածածին յոյս մեր ել
 Քեզ աւրհնութիւն տամ եւ բիր,
 կոյս անարատ եւ մաքուր,
 Անմահութեանց եւ աղբիր,
 ծառաւելոցն տուր ջուր,
 Աստուծո՛ր ծագեաց Յակոբայ,
 ազգեաց բնութեանս Ադամայ,
 Ծընար զԱստուծո՛ր դու զղայ,
 Մարիամ կոյս Տալիթայ:

